Հավելված
ՀՀ փոխվարչապետի 2020 թ.
հունվարի 31 -ի N 40 - Ա որոշման

ԾՐԱԳԻՐ
«Արտակարգ իրավիճակներում առողջապահական խնդիրների նկատմամբ տեղական համայնքների դիմակայունության բարձրացում Հարավային Կովկասում»

1.	Ծրագրի նպատակը	Բարձրացնել համայնքների դիմակայունությունը՝ բնակչության առողջության վրա աղետների և արտակարգ իրավիճակների բացասական ազդեցությունն ու հետևանքները նվազեցնելու համար, ինչպես նաև բարելավել համաճարակներին դիմակայելու, առաջին օգնության, հոգեբանական աջակցության կարողությունները:
2.	Ծրագրի բարեգործական որակման նպատակը	ՀՀ օրենքներով սահմանված կարգով հարկային արտոնություններից օգտվելու նպատակով:
3.	Բարեգործը	Կարմիր խաչի և Կարմիր մահիկի միջազգային ֆեդերացիան և ԱՄՆ-ի միջազգային զարգացման գործակալությունը
4.	Ծրագիրը կատարողը	Հայկական կարմիր խաչի ընկերություն, Պարոնյան 21/1, ՀՎՀՀ 00006023
5.	Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը	ՀՀ Սյունիքի, Տավուշի և Վայոց ձորի մարզեր և Երևան քաղաքը: Բնագավառը՝ առողջապահությունն արտակարգ իրավիճակներում:
6.	Ծրագրի բյուջեն	34.605.600 ՀՀ դրամ / 72,095 շվեյցարական ֆրանկ / - առանց ԱԱՀ
7.	Բարեգործություն ստացողը	Հայկական Կարմիր խաչի ընկերության աշխատակազմը և կամավորները, որոնք ընդգրված են արտակարգ իրավիճակներում առողջապահական խնդիրներին արձագանքման /գնահատում, առաջին օգնություն, սոցիալ-հոգեբանական աջակցություն և այլ/, գործողություններում, ինչպես նաև ոլորտում գործող այլ շահագրգիռ կողմեր՝ ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարություն, ՀՀ Առողջապահության նախարարություն, մարզային և տեղական իշխանություններ և ՀՀ բնակչություն:
8.	Ծրագրի իրականացման տևողությունը	18.01.2020 – 30.09.2020թ
9.	Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը	Ծրագրի շրջանակներում ծավալվող գործողություններն են ՝ **Ծրագրի կառավարումը և հաշվետվողականությունը:** 1. Ներառում է ծրագրի մեկնարկի, գործընկերների հետ համագործակցության, շահագրգիռ կողմերի հետ խորհրդատվական խմբի ստեղծման, տեղական մակարդակում համակարգող հանդիպումների և հաշվետվողականության հետ կապված գործունեությունը /բյուջե 1.296.000 ՀՀ դրամ/:

		2. Աղետներին առողջապահական հետևանքների արձագանքման թիմերի ձևավորում, համայնքային կամավորների ներգրավում, դասընթացների շարքի իրականացում /բյուջե 24.336.000 ՀՀ դրամ/: 3. Աղետներին արագ արձագանքելու նպատակով ՀԿԽԸ մարզային մասնաճյուղերի և կամավորական թիմերի համար արտակարգ իրավիճակների ժամանակ անհրաժեշտ առողջապահական պարագաների պահուստային ֆոնդի ստեղծում /բյուջե 2.304.000 ՀՀ դրամ/: 4. Արագ արձագանքման թիմերի և համայնքային կամավորների մասնակցությամբ գործնական վարժանքների իրականացում /բյուջե 1.056.000 ՀՀ դրամ/: 5. Աղետներին արձագանքման թիմերի, ՀԿԽԸ մարզային մասնաճյուղերի, համայնքային կամավորների և բնակիչների համար անհրաժեշտ տեղեկատվական նյութերի մշակում ու տպագրում /բյուջե 4.283.040 ՀՀ դրամ/: 6. Ծրագրի կազմակերպչական և պահպանման ծախսեր՝ 1.330.560 ՀՀ դրամ, որը ներառում է գործունեության համար անհրաժեշտ գրենական պիտույքներ ձեռք բերելու և համակարգչի, կապի և կոմունալ ծախսեր:
10.	Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայու-թյունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը	Ձեռք բերվող ապրանքների և ծառայությունների համառոտ նկարագիրը՝ 1. Աղետներին արագ արձագանքելու նպատակով ՀԿԽԸ մարզային մասնաճյուղերի և կամավորական թիմերի համար արտակարգ իրավիճակների ժամանակ անհրաժեշտ առողջապահական պարագաների պահուստային ֆոնդի ստեղծում, որն իր մեջ ներառում է առաջին օգնության, հիգիենայի և այլ պարագաներ, որի գումարը կազմում է 2.304.000 ՀՀ դրամ: 2. Աղետներին արձագանքման թիմերի, ՀԿԽԸ մարզային մասնաճյուղերի, համայնքային կամավորների և բնակիչների համար անհրաժեշտ նյութերի մշակում և տպագրում, որի գումարը կազմում է 4.283.040 ՀՀ դրամ: 3. Ծրագրի շրջանակներում նախատեսված հանդիպումները, դասընթացներն ու այլ նմանատիպ միջոցառումներն իրականացնելու համար ձեռք են բերվելու գրենական պիտույքներ, սնունդ, ուսումնական վարժանքների համար՝ անհրաժեշտ պարագաներ /առաջին օգնության արկղ, հիգիենիկ պարագաներ և այլն/, վճարվելու է մասնակիցների համար գիշերավարձ և այլ ծախսեր, որի գումարը կազմում է 19.344.000 ՀՀ դրամ: 4. Ծրագրի կազմակերպչական և պահպանման ծախսեր՝ 1.330.560 ՀՀ դրամ, որը ներառում է գործունեության համար անհրաժեշտ գրենական պիտույքներ ձեռք բերելու և համակարգչի, կապի և կոմունալ ծախսեր:

11.	Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպչական ծախսերը	Կազմակերպչական և պահպանման ծախսեր՝ 1.330.560 ՀՀ դրամ, որը ներառում է գործունեության համար անհրաժեշտ գրենական պիտույքներ ձեռք բերելու և համակարգչի, կապի և կոմունալ ծախսեր:
12.	Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ	Ծրագիրն իրականացվելու է ՀՀ երեք մարզերում և Երևան քաղաքում ՀՀ Արտակարգ իրավիճակների նախարարության, «Աղետների ռիսկի նվազեցման ազգային պլատֆորմ հիմնադրամի, ՀՀ առողջապահության նախարարության, ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության, թիրախային համայնքների, ինչպես նաև ոլորտում գործող տեղական և միջազգային կազմակերպությունների հետ սերտ համագործակցությամբ:
13.	Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը	Նախատեսվում է տրամադրել եռամսյակային, միջանկյալ և ավարտական հաշվետվություններ Կարմիր խաչի և Կարմիր մահիկի միջազգային ֆեդերացիային, ինչպես նաև կատարվելու են պարբերաբար մոնիթորինգային այցեր նվիրատուների կողմից: Հայկական կարմիր խաչի ընկերության գործադիր կոմիտեի կողմից նույնպես իրականացվելու է գործունեության անմիջական վերահսկում: Նախատեսվում է կազմակերպել ծրագրի ավարտական արդյունքների, քաղած դասերի և փորձի վերաբերյալ հանդիպում Երևանում, ինչպես նաև ՀՀ կառավարության 2003 թ. հունվարի 16 N 66-Ն որոշմամբ հաստատված բարեգործական ծրագրերը բարեգործական որակելու և գրանցելու կարգի 25-րդ կետով սահմանված կարգով կներկայացվեն տեղեկություններ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ Տ. ԱՎԻՆՅԱՆ